- ▼ ПБрАЖ10-4 MoS₂ 3%
- ПБрА10 MoS₂ 9%
- ПБрАЖ10-4 MoS₂ 15%

Как видно из рисунка, при сухом трении введение дисульфида молибдена в сплав ПБрА10 приводит к снижению как коэффициента трения (f), так и износа (J) для всех используемых нагрузок. Однако увеличение содержания MoS₂ сверх 3%

(по массе) приводит или к повышению этих показателей (μ и η) или к их медленному изменению. Таким образом, для сухого трения оптимальным количеством твердой смазки в виде дисульфида молибдена, в порошковых алюминиевых бронзах является 3% по массе, что соответствует 5,14 – 5,03% по объему соответственно для ПБрА10 и ПБрАЖ10-4.

Введение жидкой смазки по одной капле каждые 0,5 часа приводит к снижению как коэффициента трения, так и износа композиции и контртела.

Наблюдается четко повышение коэффициента трения от повышения нагрузки, однако это тенденция является логичной.

Таким образом, можно констатировать: оптимизация содержания твердой смазки для сухого и граничного трения совпадает, и достаточно проводить эксперименты только при сухом трении. При этом коэффициент трения уменьшается, при граничном трении на 1,0 – 1,5 порядка.

ՀԱԼՎԱԾ ԶՈՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ և ԹԱՓԱՆՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Դովսեփյան, Ի. Դուլյան, Դ. Ամբարյան, Ա. Դովսեփյան

Գործիքների պատրաստման և զոդման գործընթացներում հալված զողանյութը դժվար է թրջում և կպնում կարծր համաձուլվածքն փթեղիկների մակերևույթներին, առանձին դեպքերում՝ գործիքի շահագործումից կարճ ժամանակ հետո, փթեղիկը պոկվում է գործիքի իրանային մասից:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործիքների զոդման ընթացքում հալված զողանյութի թրջելիության և մազանոթային թափանցելիության գործընթացների վրա կարող են ազդել տեխնոլոգիական մի շարք բնութագրեր, այդ թվում՝ զոդման ռեժիմները, ֆլյուսի և զողանյութի բաղադրությունը, տաքացման եղանակը, կարծր համաձուլվածքն փթեղիկների և հիմնական մետաղի զողվող տեղամասի մակերևույթների խորդուրդությունները, նրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները և այլն:

Հալված զողանյութի թրջելիությունը և մազանոթներով թափանցելիությունը բնութագրվում են ֆլյուս-զողանյութ – հիմնական մետաղ մակերևութային լարվածության գործակցի արժեքներով: Հալված զողանյութի թրջելիության մակարդակը որոշվում է նաև հալված զողանյութի և մետաղական պինդ մարմնի հպման կետից տարված շոշափողի և մակերևույթի հետ կազմած եզրային անկյան մեծությամբ:


Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել զողանյութերի տարածման և թափանցման մի շարք բնութագրեր և հիմնավորված առաջարկով զոդման նոր տեխնոլոգիական գործընթացի կիրառմամբ բարձրացնել գործիքների մաշակայունությունը և երկարակեցությունը, ուսումնասիրել զոդման ընթացքում իրականացվող կառուցվածքազոյացման որոշ օրինաչափություններ: Այս առումով առաջարկված է կատարել գործիքների զոդում, գործնականում ընդունված բարձր հաճախականությամբ հոսանքի գեներատորների միջոցով ֆլյուսի օգտագործմամբ, ինչպես նաև պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարաններում՝ առանց ֆլյուսի:

Հալված զողանյութի թրջելիությանը գնահատական տալու համար կարծր համաձուլվածքներից պատրաստված օղակի մեջ մամլվել է 40X մակնիշի պողպատից պատրաստված և օղակի տրամագծից 0.05 մմ գերազանցող միջուկ /Նկ.1.ա./: Որպես զողանյութ ընտրվել է էլեկտրոլիտային պղնձե լար, օղակի ձևով տեղադրվել պողպատե միջուկի շուրջը: Տաքացումը և զոդումը կատարվել է բարձր հաճախականության հոսանքի գեներատորով ֆլյուսի առկայությամբ և պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարանում, առանց ֆլյուսի, հետևյալ ռեժիմներով

Տաքացման ձևը	Տաքացման արագությունը, աստ/վրկ	Սառեցման արագությունը, աստ/վրկ	Տաքացման ջերմաստիճանը, °C
1. Տաքացում պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարանում	1.4	0.4	1150
2. Տաքացում բարձր հաճախականության հոսանքի գեներատորներով	40	օդում	1150

Կատարած գիտական աշխատանքի վերլուծության հիման վրա տաքացման և զոդման յուրաքանչյուր եղանակի համար պատրաստվել է և փորձարկվել են 3-ական նմուշներ, որոնք տաքացնելուց հետո կտրատվել և մամլված մակերևույթում որոշվել են հալված զողանյութի թափանցման, տարածման և թրջելիության աստիճանը:

Կատարված փորձնական տվյալներից պարզվել է, որ այն նմուշները, որոնք տաքացվել են ԲՀԳ-ի գեներատորներով, հալված զողանյութի թրջելիության աստիճանը շատ փոքր է և աննշան /Նկ.1.գ./:



Նկ. 1 Զողանյութի տարածման և թափանցման մակերեսի որոշումը ա) նմուշների զողակարի ստացման համար նմուշի մակերես ստացված հարահոսային վառարանում բ) և գ) ԲՀԳ-ով

Պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարանում տաքացված նմուշների զողանյութի թրջելիության և տարածման աստիճանը բազմակի անգամ գերազանցում է ԲՀԳ-ին /Նկ.1. բ./:

Բարձրորակ զոդման տեխնոլոգիական գործընթացը իրականացնելու համար մշակված են տեխնոլոգիա և ռեժիմներ, այն արտադրական պայմաններում իրականացնելու համար:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ
Գ. Դովսեփյան

Արդյունաբերության տարբեր բնագավառներում մեծ կիրառություն ունեն փոշեմետալուրգիայի եղանակով ստացված կարծր համաձուլվածքն փթեղիկները: Հիմնականում

օգտագործվում են երեք տարբեր խմբերի կարծր համաձուլվածքե քիթեղիկներ: Ղրանք են

- 1) BK(WC+Co);
- 2) TK(TiC+WC+Co);
- 3) TTK(TiC+TaC+WC+Co):

Կարծր համաձուլվածքե վերոհիշյալ բոլոր բաղադրություններում, որպես կապակցող նյութ, օգտագործվում է բարձր ֆերոմագնիսական հատկություններ ունեցող կոբալտը, իսկ կարբիդները օգտագործվում են որպես կտրող էլեմենտներ: Թիթեղիկների ամրացումը կտրող գործիքների վրա կատարվում է մեխանիկական ձևով և զոդումով: Ձողումը իրականացվում է բարձր հաճախականության հոսանքի գեներատորների միջոցով, 950...1200°C ջերմաստիճաններում, բարձր մագնիսական դաշտում:

Նախնական փորձնական կատարած աշխատանքների արդյունքներից պարզվել է, որ P33-ի միջոցով տաքացված և զոդված քիթեղները սովորական մեխանիկական ամրացումով քիթեղների նկատմամբ ունեն ցածր մաշակայունություն: Այս առումով գործնական նշանակություն ունի P33-ով մշակվածան դեպքում մագնիսական դաշտի ազդեցության պարզաբանումը կարծր համաձուլվածքե քիթեղիկների որակական հատկանիշների վրա:

Համապատասխան տեխնոլոգիական գործընթացների, համաձուլվածքում կոբալտի ֆազան կապակցում է տիտանի, վոլֆրամի կարբիդներին: Որքան այդ կապը ուժեղ է, այնքան աշխատանքի ընթացքում քիթեղիկից կարբիդների պոկվելու հավանականությունը փոքր է և կարբիդները տաշեղահանում են ու մաշվում: Այլ է պատկերը կարբիդների և կոբալտի կապի թուլացման դեպքում: Թույլ կապերի առկայության դեպքում, կարբիդների տաշեղահանմանը զուգընթաց, դեռևս չմաշված, հաճախակի է դառնում պոկվելը և տաշեղի հետ հեռանալը:

Աշխատանքի նպատակն է գիտափորձնական հետազոտությունների հիման վրա պարզաբանել մագնիսական դաշտի ազդեցությունը մետաղակերամիկական կարծր համաձուլվածքե քիթեղիկների մաշակայունության և երկարակյանության վրա:

Ուսումնասիրվել են նույն որակի և բաղադրության մետաղակերամիկական կարծր համաձուլվածքե եռանիստ քիթեղիկների չորս խմբաբանակ, յուրաքանչյուր խմբաբանակում նույն մակնիշի քսան քիթեղիկներ ենթարկվել են ջերմային մշակման, վակուումում, էլեկտրական հարահոսային պաշտպանիչ գազային միջավայր ունեցող վառարանում, բարձր հաճախականության հոսանքի գեներատորների միջոցով, իսկ չորրորդ խմբաբանակը ջերմային մշակման չի ենթարկվել: Ջերմային մշակման ռեժիմները (ջերմաստիճան, տաքացման արագություն, սառեցման արագություն, պահման տևողություն և այլն) բոլոր ձևերում պահվել են նույնը: Ջերմամշակումից հետո քիթեղիկները ենթարկվել են մեխանիկական փորձարկման: Մշակվել է պողպատ 45, հետևյալ ռեժիմներով V=100 մ/րոպ., S=0.1 մմ/պտ., t= 1.5 մմ: Ստացված արդյունքներից պարզվել է, որ P33-ով տաքացված քիթեղիկները իրենց մաշակայունությամբ զիջում են մնացած բոլոր ձևերով մշակված քիթեղիկների մաշակայունությանը: Մաշակայունության բարձր ցուցանիշներ են ստացվել պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարանում, որի ցուցանիշը ընդունվել է 100%, իսկ վակուումում այն կազմել է 82...86%, ջերմամշակված քիթեղիկներինը՝ 85...90%, P33-ով տաքացման դեպքում՝ 60...65%: Հարահոսային վառարանում ջերմամշակված քիթեղիկների մաշակայունության բարձրացումը կապված է եղել ջերմամշակման ընթացքում քիթեղիկների արտաքին մակերևույթների վրա մաշակայուն շերտի ստացման հետ:

P33-ով տաքացրած քիթեղիկների վրա մագնիսական դաշտի ազդեցությունը պարզաբանելու նպատակով, կատարվել է երկու խմբի քիթեղիկներով (P33 և ջերմամշակված) մեխանիկական մշակման ժամանակ ստացված տաշեղների քիմիական անալիզ, որոշվել են քիթեղիկներից դուրս եկած տաշեղներում կարբիդի քանակը: Յուրաքանչյուր եղանակով ուսումնասիրված 300 գրամ տաշեղի քիմիական անալիզը ցույց է տվել, որ P33-ով տաքացրած և մշակված տաշեղների մեջ տիտանի և վոլֆրամի կարբիդների բաժնակը 25...30%-ով գերազանցում են ջերմամշակված քիթեղիկներով ստացած և տաշեղների մեջ կարբիդների քանակին:

Ստացված արդյունքները հիմք են տալիս ենթադրելու, որ P33-ով տաքացման դեպքում, առաջացող ուժեղ մագնիսական դաշտը, զոդման բարձր ջերմաստիճանում, դոմենների առկայության դեպքում թուլացնում է կարբիդների և կոբալտի կապակցությունները,

որը և պատճառ է հանդիսանում տաշեղահանման գործընթացներում կարծր համաձուլվածքե քիթեղիկներից կարբիդների պոկվելուն:

Ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է կարծր համաձուլվածք գործիքների զոդման և պատրաստման, ինչպես նաև նրանց որակական հատկանիշների բարձրացման մի շարք դրույթներ և գործնական առաջարկություններ:

ՄԵՏԱՂԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՋԵՐՄԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Յ. Ավինյան Ս. Ստեփանյան

Գիտության և տեխնիկական միջոցների բուռն զարգացման հետ միասին հայտնաբերվեցին մետաղամշակման նոր եղանակներ (էլեկտրաէրոզիոն, լազերային և այլն), որոնց զուգահեռ մոդեռնացվեցին նաև հին, դասական եղանակները (ձուլում, ճնշմամբ մշակում, եռակցում ...): Այս ամենի հետ միասին վերելք ապրեց նաև սառը հաստցային մետաղամշակումը:

Ստեղծվեցին մետաղահատ հաստոցներ՝ բվածրագրային առավարմամբ, որոնց արտադրանքի որակը խիստ պակաս չափով է կախված հաստոցավարի որակավորումից, այս հանգամանքը խթանեց նաև մետաղահատ գործիքների արտադրությունը և դրանց, շահագործման վերաբերյալ նոր մտեցումները, որը ենթադրում է նաև նախապատրաստվածքի անհրաժեշտ նախնական ջերմամշակումը:

Մետաղի սառը կտրմամբ մշակման տեխնիկայում մեծ դեր ունի նաև ջերմամշակումը, առանց որի անհնար է ստանալ բարձրորակ արտադրանք այդ ասպարեզում:

Նախնական ջերմամշակումը լավացնում է մետաղի տեխնոլոգիական հատկությունները՝ նախապատրաստելով դրա մշակումը ինչպես կտրմամբ, այնպես էլ մշակման այլ եղանակներով (դրոշմում, զլանում և այլն): Այսինքն մետաղի ստրուկտուրան կարգավորվում է համապատասխան ձևով լավագույն արդյունքի ստացման համար, ինչպես մետաղի մեխանիկական մշակման ժամանակ, այնպես էլ դրա հետագա ջերմամշակման ժամանակ:

Ելույթի մշակվելիությունը միացյալ հասկացություն է, որը բնութագրվում է կտրման ուժով և արագությամբ, մշակվող մակերևույթի որակով, առաջացած տաշեղի ձևով և այլն: Բոլոր այս գործոնները կախված են մշակվող մետաղի հատկություններից՝ հետևաբար նաև դրա ստրուկտուրայից:

Մշակվելիության գնահատումը մետաղի կարծրությամբ, հոսունությամբ կամ ամրության սահմաններով հնարավոր է որոշակի մոտավորության սահմաններում, եթե մետաղը միաֆազ է կամ մշակվում է ոչ թե համաձուլվածք, այլ մաքուր մետաղ:

Մետաղի միկրոստրուկտուրան հիմնական գործոններից մեկն է, որն ազդում է մետաղի մշակվելիության վրա: Ուս նշանակում է, որ մետաղամշակման ժամանակ գործիքների, քսուքների և սառեցնող հեղուկների, ինչպես նաև մշակման ճշգրիտ ռեժիմների ընտրությունը դեռևս բավարար չէ լավ արդյունքների ստացման համար: Ղրա հետ միաժամանակ ավելի կարևորվում են ճիշտ ընտրված նախնական ջերմամշակման ռեժիմներ, որոնք հանգեցնում են վերջնական լավագույն արդյունքի: Հայտնի է, որ չուգունների մեխանիկական մշակման ժամանակ, կախված դրանց ստրուկտուրայից (ֆեռիտային, ֆեռիտ - պեռլիտային) կարող ենք ստանալ տարբեր արդյունքներ, քանի որ, օրնակ, ֆերրիտի մեծ քանակությունը ստրուկտուրայում է գործիքի շեղքին:

Այդ ֆեռիտային կամ պեռլիտային մատրիցայի մեջ միջուկավոր կարբիդային մասնիկները նույնպես հանգեցնում են մշակվելիության վատացմանը: Այս դեպքում պարզ է, որ այնպիսի դետալներ, ինչպիսիք են ավտոմոբիլների բաշխիչ կամ ծնկաձև լիսեռները մշակումից հետո, ըստ դետալի երկարության տարբեր մասերը կունենան մշակման մակերևույթի տարբեր մաքրություն, տարբեր որակ: Այսպիսի դեպքերում օպտիմալ հատկությունները ձևավորվում են մետաղի ստրուկտուրային պարամետրերով գրաֆիտային մասնիկների ձևով և չափերով, կարբիդների հատիկների մեծությամբ և ֆեռիտի թուլատրված քանակով:

Երկու պլաստիկ ֆազերից բաղկացած համաձուլվածքի վարքը մեխանիկական մշակման ժամանակ կարելի է գնահատել մոտավոր ձևով, եթե ենթադրենք, որ դիտարկվող ծավալում դեֆորմացիաները մոտավորապես հաստատուն են բոլոր երկու ֆազերի սահմաններով: Բայց լարումները, որոնք ազդում են ֆազերի վրա, առանձին - առանձին

(σ_1, σ_2) տարբեր են և $\sigma_{\text{ըն}}$ լարումը կարող է որոշվել ըստ այդ ֆազերի ծավալային մասերի (f_1, f_2): Այսպես

$$\sigma = f_1\sigma_1 + f_2\sigma_2:$$

Այսուհանդերձ հարկավոր է նշել, որ մետաղի դեֆորմացիայի միատարրության ընդունումը այս դեպքում խիստ սահմանափակ է: Օրինակ Ռ. Յոնիկոմբը և այլ հեղինակներ նշում են, որ երկֆազ արույրի դեֆորմացիայի ժամանակ (60% α ֆազ, 40% β ֆազ) β ավելի կարծր ֆազի հատիկները սահմանափակ վրա ենթարկվում են ավելի մեծ դեֆորմացիաների քան հատիկի ներսում:

Սա ապացուցում է, որ մինչև իսկ նույնանուն ֆազերի դեպքում մշակվելիությունը մետաղի տարբեր մասերում տարբեր է: Նմանատիպ սահմանափակումները, ելնելով պլաստիկ հատկանիշներից, հանգեցնում են շատ կարևոր հետևությունների, մասնավորապես, մետաղների դրոշմման ժամանակ:

Երկֆազ համաձուլվածքների համար, որոնք ֆազերի հատկությունները կտրուկ տարբերվում են միմյանցից (օրինակ փխրան ցենենտիտ և պլաստիկ ֆեռիտ) մշակվելիության գնահատումը ըստ մեխանիկական հատկությունների կարելի է կատարել միայն այն դեպքում, երբ սահմանված է միանշանակ կարգավորում (координация) համաձուլվածքի ստրուկտուրային պարամետրերի և ինտեգրալ հատկությունների միջև:

Բառերը կատարել է համեմատական անալիզ տեղիտային գնդակերպ մասնիկներով պողպատի համար և ցույց է տվել, որ տեղիտի մեջ մտնող կարծր մասնիկները, որոնք ունեն 1 մկմ կարգի չափեր հոսունության լարումների վրա ունեն չնչին ազդեցություն, եթե ֆազի ծավալում դրանք 10%-ից պակաս են, և ոչ մեծ ազդեցություն, եթե դրանց ծավալային քանակը չի գերազանցում 1/3-ը:

Հեղինակը այստեղից հետևություն է անում, որ այն միտումը, որ մետաղի հատիկները լինեն գնդաձև, եթե այդ կարծր մասնիկների ծավալային քանակը մինչև 30% է, արդարացված չէ:

Կարծր մասնիկների տեսքը ծավալամասերի դեպքում, որոնք դժվար են դեֆորմացվում պլաստիկ դեֆորմացիայի ժամանակ առաջատար նշանակություն ունեն սուբստրուկտուրային էլեմենտները և սուբմիկրոմասնիկները պլաստիկ մատրիցայի մեջ: Այս պատճառով ցածր ածխածնային պողպատները և այն համաձուլվածքները, որոնք պարունակում են երկրորդ ֆազի փոքր ծավալային քանակներ, պետք է ենթարկվեն այնպիսի մշակման, որը կմեծացնի արատների խտությունը և որոշ չափով կամրացնի պողպատի մատրիցան (մինչև 0.2% ածխածին պարունակող): Այս դեպքում ենթադրվում է կատարել նորմալացում արագացված սառեցմամբ, իսկ 0.4 -0.6 % ածխածին պարունակության դեպքում պողպատը լավ է ենթարկել իզոթերմ թրծման: 0.6 % C -ից ավելի պարունակության դեպքում հեղինակը համարում է, որ լավագույն ջերմամշակումը մշակվելիության առավելագույն ցուցանիշները ստանալու համար սֆերսիդացնալ թրծումն է:

Չնայած հիմնականում իզոթերմ թրծման արդյունքները բավարար են ստացվում, բայց այդ ձգտումը միշտ չէ, որ լավագույն արդյունքներ է տալիս 18 XTT, 28 XTT, 25 XTM, 12 X2H4A պողպատների համար, մասնավորապես, եթե այդ պատրաստվածքների կտրվածքը մեծ է 50 մմ - ից:

Նշվածը ապացուցում է, որ մոտեցումները մշակվելիության լավացման համար այս կամ այն ջերմամշակման կիրառման նկատմամբ պետք է տարբերակվեն հաշվի առնելով նաև ինչպես վերը նշված բոլոր պարամետրերը, այնպես էլ նախապատրաստվածքի կամ դետալի կտրվածքի չափերը:

ՊՂՆՁԻ ՀԻՄՔՈՎ ԲԱՐՁՐԱՍՈՒՐ ԵՎ ԿՈՌՈԶԻՈՆԱԿԱՅՈՒՆ ՀԱՎԱՇՇՈՒՄ
ՆՅՈՒԹԵՐԻ ԱՏԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ս. Աղբալյան, Է. Անայան, Գ. Վասիլյան, Է. Համբարձումյան

Ժամանակակից տեխնիկայի զարգացումը կապված է այնպիսի նյութերի ստեղծման հետ, որոնք ունակ են աշխատելու մեծ բեռնվածություններով և արագություններով, բարձր և ցածր ջերմաստիճաններում, քիմիական ագրեսիվ միջավայրերում, ինչպես նաև սահմանափակ և չոր շփումների պայմաններում: Ինչպես հայտնի է, սև և գունավոր մետաղ-

ների հիմքով համաձուլվածքները չեն բավարարում վերը նշված պայմաններին: Մյուս կողմից, քանի որ Շարպլիի հայտնի մեխանիզմը կիրառելի է միայն անագային հակաշփական համաձուլվածքների համար, որոնք ունեն ցածր մաշակալուծություն և ամրություն, այդ իսկ պատճառով ցածր շփման գործակցով և մաշակալուծ ու բարձրամուր հակաշփական նյութերի ստեղծումը ներկայումս դառնում է խիստ արդիական և հրատապ:

Ինչպես հայտնի է, վերջին տարիներին մեծ տարածում են գտել սև և գունավոր մետաղների հիմքով ծակոտկեն հակաշփական նյութերը, որոնք ունենալով փոքր ամրություն և մաշակալուծություն չեն կարող աշխատել մեծ ճնշումների (10 ՄՊա -ից ավելի) և արագությունների (4...10 մ/վրկ ավելի) պայմաններում: Դա պայմանավորված է մեծ բեռնվածությունների տակ ծակոտկեն նյութերի կաշռոլունակությամբ, որը ի հայտ է գալիս մեծ արագությունների դեպքում: Կաշռոլունակությունը պայմանավորված է հակաշփական թաղանթի քայքայմամբ կամ օքսիդացմամբ, իսկ որոշ դեպքերում ներծծմամբ ծակոտկեն մատրիցայի մեջ: Հաճախ կոնտակտային տեղամասում տեղի է ունենում ջերմաստիճանի կտրուկ բարձրացում, որի հետևանքով տեղի է ունենում ամրության և մաշակալուծության կտրուկ անկում: Ջերմաստիճանի բարձրացմանը հատկապես ենթարկվում է ծակոտկենությունը, որովհետև ծակոտկենության մեծացմանը զուգընթաց տեղի է ունենում ջերմահաղորդականության կտրուկ անկում: Համաձայն շփման տեսության՝ մոլեկուլար-մեխանիկական մեխանիզմի արտաքին շփման վրա ծախսված աշխատանքը լինում է ամենափոքր այն դեպքում, երբ աղգեզիոն կապի ամրությունը լինում է փոքր շփվող շերտերի ամրությունից, այսինքն երբ շփվող շերտերի խորությամբ առկա է մեխանիկական հատկությունների դրական գրադիենտ $d\sigma_x/dz > 0$, որտեղ σ_x -ը քայքայող լարումն է, իսկ Z-ը կորդինատը: Արտաքին շփման պայմանները ապահովվում են այն դեպքում, երբ սահի դեֆորմացիաները կենտրոնացված են մակերևութային շերտում: Եթե աղգեզիոն կապը ամուր է, ապա առաջանում է մեխանիկական հատկությունների բացասական գրադիենտ $d\sigma_x/dz > 0$, որի դեպքում տեղի է ունենում շփվող մակերևութային կապակցում: Արդյունքում տեղի է ունենում շփվող զույգերից որևէ մեկի մակերևութային շերտի խորը քայքայում: Աղգեզիոն փոխազդեցությունը դրսևորվում է բարակ շերտով (մինչև 10^{-3} մ) և գնահատվում է σ_m/σ չափողականություն չունեցող պարամետրով, որտեղ σ_m -ը մոլեկուլային կապի դիմադրությունն է սահի նկատմամբ, իսկ σ -ը նյութի հոսունության սահմանն է: Շփման ժամանակ մեխանիկական փոխազդեցությունը կատարվում է շերտի որոշակի խորությամբ ($\sim 10...20$ մկմ) և բնութագրվում է h/r հարաբերությամբ, որտեղ h -ը և r -ը շփվող մակերևութների անհարթությունների պարամետրներն են: h -ի և r -ի տարբեր մեծությունների դեպքում առաջանում է 1. առանձգական հպում, երբ $h/r \leq 2,4E\sigma / \Sigma$; 2. պլաստիկ հպում, երբ $h/r > 2,4E\sigma / \Sigma$, որտեղ E -ն նյութի առանձգականություն մոդուլն է, իսկ Σ -ը դեֆորմացիան:

Մյուս կողմից շփումը և մաշումը ուղեկցվում են ոչ միայն առանձգական և պլաստիկ դեֆորմացիաներով, այլ նաև մակերևութային շերտում ֆազային փոխակերպություններով: Այստեղից հետևում է, որ շփվող զույգերի աշխատանքի էֆեկտիվությունը պայմանավորված է ոչ միայն նյութի սկզբնական կառուցվածքով, այլ նաև շփման մակերևութում առաջացած երկրորդային կառուցվածքով: Ինչպես երևում է, խնդրի դրական լուծումը հնարավոր է այն դեպքում, երբ ստեղծվի կայուն հարաբերակցական կապ նախնական և երկրորդային կառուցվածքների միջև, որը կհանգեցնի շփման և մաշման գործընթացների ռացիոնալ կառավարման:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել բարձրամուր հակաշփական նյութերի ստացման սկզբունքները, որը պետք է հիմնված լինի շփման և մաշման տեսության մոլեկուլային - մեխանիկական տեսության վրա: Սա նշանակում է, որ ապահովելով մեխանիկական հատկությունների դրական գրադիենտ խորության ուղղությամբ, շփման ժամանակ ամբողջ դեֆորմացիան պետք է կենտրոնացվի մակերևութային բարակ շերտում: Այսպիսի պայմաններում կատաստորֆիկ քայքայումը և խորությամբ պոկումները բացառվում են: Ուսումնասիրությունները կատարվել են Cu-Ni փոշեհամաձուլվածքի ուղղությամբ, որը ամրամակրովել է X18H9T մակնիշի պողպատյա թելերով (ГОСТ 3875-59, $\sigma = 0,28$ մմ): Սետադաթելերը նախօրոք կտրվել են $l/d = 20$ հարաբերությամբ, որից հետո պատրաստվել է բովախառնուրդը: Որպես պինդ քսանյութ օգտագործվել է մոլիբդենի երկտուլֆիտը (MoS_2), որը շփման ժամանակ հավող մակերևութային առաջացնում է, այսպես

կղզված, «պաշտպանիչ բաղանջներ» (երկրորդային ստրուկտուրա) և ապահովում է շփվող հանգույցի աշխատունակությունը մեծ բեռնվածքների ու արագությունների պայմաններում, այդ թվում նաև էքստրեմալ:

Ամրային հատկությունների բարձրացումը պայմանավորված է X18H9T մակնիշի պողպատյա մետաղաթելերով ամրանավորմամբ: Ինչպես հայտնի է Cu-Ni համաձուլվածքը չի ենթարկվում ջերմային մշակման և ունի համեմատաբար ցածր ամրություն, քան պողպատյա մետաղաթելերը: Բովախարուրը մանելուց հետո ենթարկվում է տաք արտամղման $\lambda=4-6$ արտամղման գործակցով, որը ապահովում է գործնականում անծակուտկեն կառուցվածք: Ուսումնասիրվել են տաք արտամղման գործընթացը և ընտրվել է օպտիմալ ռեժիմներ T, τ, λ :

Նմուշները արտամղումից հետո ենթարկվել են դիֆուզիոն բրծման, որից հետո կատարվել են մետաղագիտական հետազոտություններ, ինչպես նաև ուսումնասիրվել է շփման գործակիցը չոր և սահմանային շփման պայմաններում: Օրինակ, սահմանային շփման ժամանակ $Q = 10...20$ ՄՊա բեռնվածության և $V = 0,5...10$ մ/վ արագությունների պայմաններում շփման գործակիցը տատանվում է $f = 0,01...0,005$ սահմաններում, իսկ մաշակայունությունը $I_p = (3...10)10^{-2}$ մկմ/կմ: Այս նյութերի ամրային հատկություններն են $\sigma_b=400...450$ ՄՊա, $\delta = 35...40\%$, $\psi = 68...70$, $HB = 1000-1500$ ՄՊա:

Փորձի արդյունքների հիման վրա մշակվել է Cu-Ni-X18H9T-MoS₂ հիմքով կոռոզիոնակայուն բարձրամուր հակաշփական նյութ, որը ունենալով բարձր մեխանիկական և հակաշփական հատկություններ, ընդունակ է աշխատելու քիմիական ագրեսիվ միջավայրում:

ФОРМИРОВАНИЕ СТРУКТУРЫ И СВОЙСТВ ПОРОШКОВЫХ АЛЮМИНИЕВЫХ СПЛАВОВ

Г. Бабаян, А. Казарян

Эксперименты проводились на сплавах следующих составов: <Al - 2,5% Cu>; <Al - 5,0% Cu>; <Al - 7,5% Cu>; <Al - 0,35% Cr>; <Al - 5,0% Cu - 0,70% Cr>; <Al - 7,5% Cu - 3,0% MoS₂>; <Al - 7,5% Cu - 6,0% MoS₂>; <Al - 7,5% Cu - 9,0% MoS₂>.

Нами выполнен полный структурный анализ разрабатываемых сплавов, используя оптическую и электронную микроскопию, микрорентгеноспектральный и рентгенографический анализы. С этой целью по оптимальным режимам экструзии ($T_s = 530...540^\circ\text{C}$, $\tau_s = 0,5$ ч, $\sigma_s = 110^\circ\text{C}$, $\lambda_s = 4$) были получены опытные партии алюминия и его сплавов, из которых по стандартной методике изготавливали шпифы. Для правления шпифов брали типовые реактивы, в частности раствор Келлера. После экструзии образцы подвергали термической обработке - отжигу и закалке с последующим старением. Отжиг проводили при температуре 500...520 °С продолжительностью ~ 5 ч. Из отожженных заготовок механической обработкой изготавливали экспериментальные образцы, затем нагревали до 500...520 °С, выдерживали при этой температуре ~ 1,5 ч и закалывали в воде. Закаленные образцы подвергали естественному старению ($T_c=150^\circ\text{C}$, $\tau_c = 1,5$ ч) и естественному (8 дней и 4 месяца) старению. Чтобы исключить отрицательное воздействие атмосферы, термообработку образцов проводили в среде осушенного (точка росы - 45°С) аргона марки А.

По результатам механических испытаний (рис. 2 и 3) более предпочтительным оказался сплав состава <Al - (5,0...7,5)% Cu - 0,35% Cr>, который принят нами за базовый сплав для трения испытаний.

Были проведены испытания на трение и износ с целью определения антифрикционных свойств алюминиевых сплавов. Для установления оптимальных составов изучали влияние условий работы (трение сухое и со смазкой) и содержания MoS₂ на антифрикционные свойства. Трение осуществлялось по схеме:




Рис. 1. Зависимость твердости от содержания меди в сплавах системы «Al - Cu».




Рис. 2. Зависимость твердости от содержания хрома в сплавах системы «Al - 0,5% Cu - Cr».

подвижная колодка – вращающийся диск. Образцы в течение 1,5...2,0 ч прирабатывали при нагрузке $P = 2$ кгс и скорости скольжения $v = 1$ м/с. Критерием окончания приработки служило уменьшение и последующая стабилизация момента трения. Результаты экспериментов представлены в табл. 1.

Таблица 1. Результаты испытаний на машине трения и износа

Образцы	Нагрузка 1 кг			Нагрузка 3 кг			Нагрузка 5 кг		
	$Q_{обр.}$ г	$Q_{кон.}$ г	Γ	$Q_{обр.}$ г	$Q_{кон.}$ г	Γ	$Q_{обр.}$ г	$Q_{кон.}$ г	Γ
Сухое трение									
Al – 7,5% Cu – 3,0% MoS ₂	0,034	0,016	0,43	0,074	0,030	0,39	0,059	0,073	0,48
Al – 7,5% Cu – 6,0% MoS ₂	0,032	0,015	0,58	0,054	0,026	0,47	0,079	0,037	0,48
Al – 7,5% Cu – 9,0% MoS ₂	0,046	0,021	0,48	0,101	0,013	0,46	0,109	0,011	0,55
Трение со смазкой									
Al – 7,5% Cu – 3,0% MoS ₂			0,09			0,10			0,09
Al – 7,5% Cu – 6,0% MoS ₂			0,02			0,02			0,04
Al – 7,5% Cu – 9,0% MoS ₂			0,06			0,09			0,09

Анализ результатов показывает, что для трения со смазкой получены довольно высокие результаты, т.е. $\Gamma = 0,02...0,04$ (< Al – 7,5% Cu – 6,0% MoS₂ сплав) при минимальном износе, практически не фиксируемом при режущих испытаниях. Это говорит о том, что явление схватывания, присущее алюминию и его сплавам, практически подавлено.

ՄԵՏԱՂԱՎԱՍՏԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՏՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ Ա.Աղբալյան, Ա.Ղազարյան

Ժամանակակից տեխնիկայում բարձր արտադրողականությամբ այմաստային գործիքների մշակումը, որոնք նախատեսված են ոչ մետաղական նյութերի մշակման համար, համարվում է խիստ հրատապ: Այն կարևոր է հատկապես Հայաստանի Հանրապետության համար, որտեղ զարգացած է ոչ մետաղական նյութերի, ինչպիսիք են օրինակ, կերամիկան, կվարցը, սիտալները, ֆերիտները, ապակիները և այլն, մշակումը: Այմաստային գործիքների երկարակեցությունը և արտադրողականությունը խիստ կերպով կախված է կապակցող նյութի կողմից այմաստային հատիկների բռնողունակությունից, այսինքն՝ «այմաստ-կապակցող նյութ», կոմտակտի ամրային հատկություններից: Այմաստային հատիկները կապակցող նյութի կողմից պահվում են արաջին հերթին մեխանիկական կապի միջոցով և երկրորդը կոմտակտային մակերևութների ատոմագիայի շնորհիվ: Մեխանիկական կապի միջոցով այմաստային հատիկի պահումը հիմնականում կախված է պլաստիկ դեֆորմացման ժամանակ մետաղական կապակցող նյութի խտացումից: Այստեղից էլ երևում է, թե ինչ մեծ հետաքրքրություն է ներկայացնում մետաղապլաստային կոմպոզիցիաների կառուցվածքային հետազոտությունները: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ որոշ գործիքներ ստացվում են տաք արտանման միջոցով, որի ժամանակ առկա է մեծ աստիճանի պլաստիկ դեֆորմացիաներ, ապա ուսումնասիրվող հարցը դառնում է ավելի կարևոր:

Մետաղագիտական հետազոտման է ենթարկվել հալոգենային միջավայրում T_1 – ով մետաղապատված այմաստային հատիկներից տաք արտանման միջոցով ստացված

գայլիկոնները, որոնց տրամագիծը չի գերազանցում 3 մմ: Որպես կապակցվող նյութ օգտագործվել է M1 մակնիշի համաձուլվածքը (80% Cu+20% Sn): Կառուցվածքային հետազոտությունները կատարվել են ДРОН – 2 դիֆրակտոմետրի, ПМТ – 3 միկրոկարծրաչափի, Heofoom – 21 օպտիկական և РЭМ – 200 էլեկտրոնային մանրադիտակների վրա: Հղկանմուշները պատրաստվել են համապատասխան մեթոդիկայով, ընդ որում ինչպես ընդլայնական, այնպես էլ ընդերկայանական կտրվածքներով: Մակերևութները մշակվել են էլեկտրոէտզոն եղանակով, որից հետո կատարվել է հղկում օրգանական կապակցող նյութով այմաստային հղկաքարի վրա: Խամածաման համար օգտագործվել է երկաթի քլորիդ, աղաթթու և էթիլ սպիրտ:

Համաձայն Cu – Sn վիճակի դիագրամայի 80 % Cu – 20% Sn համաձուլվածքի համար Lիկվիդուսի կետը – 880° C է, իսկ Սոլիդուսի կետը 798° C: 798 – 586° C միջակայքում առկա է $\alpha + \beta$ ֆազերը, որտեղ α -ն Sn-ի պինդ լուծույթն է Cu-ի մեջ և ունի K12 բյուրեղավանդակ, իսկ β -ն էլեկտրոնային միացություն է, որը համապատասխանում է Cu₅Sn ֆորմուլային 3/2 էլեկտրոնային կոնցենտրացիայով: 586° C-ում β ֆազան ենթարկվում է էլեկտրոնային փոխակերպության, որի հետևանքով առաջանում է α և γ ֆազեր (γ -ն Cu-ի և Sn բիմիական միացության հիմքի վրա պինդ լուծույթ է): 520° C-ում γ ֆազան տրոհվում է α և δ ֆազերի, որտեղ δ -ն էլեկտրոնային միացություն է, որը համապատասխանում է Cu₃Sn₈ ֆորմուլային 21/31 էլեկտրոնային կոնցենտրացիայով: 350° C-ում δ ֆազան տրոհվում է α և ε ֆազերի, որտեղ ε -ը Cu₂Sn էլեկտրոնային միացություն է 7/4 էլեկտրոնային կոնցենտրացիայով: Վերջին փոխակերպությունը տեղի է ունենում միայն շատ դանդաղ սառեցման պայմաններում: Իրականում սենյակային ջերմաստիճանում անագային բրոնզները ունեն $\alpha + \delta$ կառուցվածք:

Ինչպես մետաղապատված, այնպես էլ ոչ մետաղապատված այմաստային հատիկներից պատրաստված գայլիկոնների ռենտգենա-ֆազային անալիզը ցույց է տվել վերը նշված կառուցվածքների ($\alpha + \delta$) առկայությունը: Երկու դեպքում էլ ինչպես α , այնպես է δ ֆազերի հատիկները մանրացվել և հավասարաչափ բաշխվել էին մակերևութային: Միաժամանակ պետք է նշել, որ մետաղապատված այմաստային հատիկների կողմնորոշվածությունը տեղի է ունեցել ավելի մեծ աստիճանի, քան ոչ մետաղապատվածինը: Իսկ ինչ մնում է այմաստային հատիկների մանրացման գործընթացին, ապա այն ավելի մեծ աստիճանի է չմետաղապատված այմաստային հատիկների մոտ: α ֆազայի միկրոկարծրությունը ստացվել է 1350-1360 ՄՊա, իսկ $\alpha + \delta$ էլեկտրոնայինը՝ 2580-2600 ՄՊա:

Ուսումնասիրվել է «այմաստ-կապակցող նյութ», սահմանում կառուցվածքազոյացման մեխանիզմը: Եթե ոչ մետաղապատված այմաստային հատիկների դեպքում անցումային շերտում չի հայտնաբերվել միջանկյալ ֆազ, այսինքն հատիկաբեռնումը իրականացվում է միայն մեխանիկորեն, ապա մետաղապատված հատիկների դեպքում հատիկի ամբողջ մակերևութային առկա է երրորդ ֆազի առկայությունը, այսինքն գոյություն ունի ադգեզիոն կապ, որը արդյունք է α պինդ լուծույթի (T-ի պինդ լուծույթն է Cu-ի մեջ), իսկ որոշ դեպքերում էլ $\alpha + \xi$ ֆազերի առկայության (ξ-ն T₂Cu₃ քիմիական միացությունն է): Ոչ մետաղապատված այմաստային հատիկների մոտ որոշ դեպքերում նկատվել են ծակոտիներ, այսինքն տեղեր, որոնք չեն լցվել կապակցվող նյութով: Վերջինս իր հերթին վատացնում է չմետաղապատված այմաստային հատիկների աշխատունակությունը և գործիքների երկարակեցությունը:

Փորձի արդյունքներից հետևում է, որ ցանկալի է տաք արտանման միջոցով այմաստային գործիքները պատրաստել մետաղապատված այմաստային հատիկներից և շնորհիվ «այմաստային հատիկ - կապակցող նյութ», ադգեզիոն կապի 1,5-2,0 անգամ մեծանում է գործիքի երկարակեցությունը:

ОСОБЕННОСТИ ТЕРМИЧЕСКОЙ ОБРАБОТКИ МЕТАЛЛОКЕРАМИЧЕСКИХ МАТЕРИАЛОВ НА ОСНОВЕ ЖЕЛЕЗА А. Петросян

Как известно, изделия конструкционного назначения, изготовляемые методами порошковой металлургии, обычно подвергаются тем или иным видам термиче-

ческой и химико-термической обработки. Однако технология термической обработки этих материалов имеет ряд отличий. Объясняется это тем что порошковые материалы пористые и обладают качественно иной макроструктурой. Так, при спекании в железуграфитовых материалах формируется структура, существенно отличающаяся от литых сталей. При температурах выше точки A_{c3} графит лишь частично растворяется в аустените. Наибольшее насыщение углеродом металлической основы происходит в микрообъемах, расположенных вблизи графитовых включений. В результате этого структура порошковой стали, содержащей более 2,0% графита, состоит из перлита, цементита мелких включений феррита и оставшихся частиц графита. Для устранения аномальности структуры порошковых сталей производят изотермический отжиг, который выполняют по режиму: нагрев до 780°C и выдержка 0,5 ч, охлаждение с изотермической выдержкой при 680°C в течение 2ч. Такая обработка обеспечивает получение структуры зернистого перлита без существенного снижения прочностных свойств. Еще большая аномальность имеет место при изготовлении изделий из многокомпонентных смесей, когда наблюдается неконтролируемость избыточных фаз. Спекание порошковых сплавов на основе железа обычно производят в течение 1...3 ч при температурах $1100...1200^{\circ}\text{C}$, значительно превышающих критические точки A_{cm} , вследствие чего можно было ожидать получение крупнозернистой структуры. Однако в структуре спеченных сплавов крупнозернистость не обнаруживается. Малая склонность к росту зерна порошковых сплавов объясняется наличием у них пор. Пористость и химическая неоднородность порошковых сталей существенно влияют на устойчивость переохлажденного аустенита, что увеличивает критическую скорость закалки, а следовательно, для получения структуры мартенсита требует применения более высоких температур. В порошковых сталях при закалке возникают значительные внутренние напряжения с концентрацией у стен пор, что резко снижает их прочность. Влияния закалки проявляется только после отпуска /табл.1/. Оптимальными температурами отпуска в зависимости от состава сталей являются температуры $200...450^{\circ}\text{C}$. С усложнением состава стали и увеличением пористости температура отпуска повышается /рис.1/. При закалке порошковых сталей в воде образуется мартенситно-бейнитная структура, которая переходит в трооститную, а затем в сорбитную. Закалка в масле дает троостито-сорбитную структуру/2/. Максимальную прочность стали приобретают после закалки и отпуска при температурах 673-773К.

Таблица 1
Изменение механических свойств стали ЖГр 0,8:П = 15% спеченой и закаленной от температуры отпуска

Время спекания, плотность	Температура, К	$\sigma_b \cdot 10^7 \text{ Па}$	$\sigma_{0,2} \cdot 10^7 \text{ Па}$	Твердость НВ
0,12.10 ⁴ с, $\gamma=6,43 \cdot 10^3$ кг/м ³	473	34,7	27,2	321
	573	35,7	44,2	237
	673	45,0	79,8	192
	773	42,3	66,8	157
0,36.10 ⁴ с, $\gamma=6,45 \cdot 10^3$ кг/м ³	473	21,0	43,7	329
	573	36,9	49,2	217
	673	49,8	73,3	168
	773	38,2	70,0	160
0,72.10 ⁴ с, $\gamma=6,47 \cdot 10^3$ кг/м ³	473	34,3	60,5	244
	573	42,2	70,9	210
	673	49,8	71,5	197
	773	38,8	65,2	157

Примечание. Температура закалки 1143 К, выдержка 3.10²с, охлаждение в воде.

ՀԱՅԻՄՅԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ և ՀԱՅԱԳՈՐԾՈՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Լ. Համբարձումյան

Ռեսուրսապահովվածության հիմնախնդրի լուծման հիմնական ուղին հանքավայրերի ռացիոնալ շահագործումն է: Հանքավայրերի ռացիոնալ շահագործումը պայմանավորված է լեռնարդյունաբերական աշխատանքների նախագծման ու պլանավորման աշխատանքներով, որոնց համար հիմք են ծառայում հետախուզական աշխատանքների արդյունքները:

Հետախուզական աշխատանքների որակի ստուգման համար անհրաժեշտ է համադրել հետախուզման և շահագործման արդյունքները (տվյալները), որը հնարավորություն կտա ճշտելու սխալի չափը և գտնելու օգտակար բաղադրիչների միջին պարունակության գնահատման առավել արդյունավետ մեթոդներ:

Հետախուզման և շահագործման արդյունքների համադրման աշխատանքներ կատարվել են աշխարհի մի շարք հանքավայրերում, որոնց արդյունքով ընդերքից արդյունահանվել է հետախուզման արդյունքով չհաստատված զգալի պաշար կամ հակասակը: Այդ հանքավայրերում օգտակար բաղադրիչի պարունակության սխալ չափը կազմել է մի քանի %-ից մինչև 400%:

Օրինակ. Նորիլսկի հանքավայրում առանձին բլոկներում օգտակար բաղադրիչի պարունակության սխալը կազմել է 400%, իսկ ամբողջ հանքավայրում 7%: Առանձին հանքավայրերում շահագործման ժամանակ պաշարը մի քանի անգամ պակաս է ստացվել, քան հետախուզման արդյունքով գնահատվածը:

Հետախուզության և շահագործողական արդյունքների համադրում կատարվել է նաև Քաջարանի հանքավայրում (Հ.Ավետիսյանի կողմից):

Այդ աշխատանքների արդյունքով պարզվել է, որ առանձին բալանսային բլոկներում մակերեսների սխալը կազմել է -18%, Cu միջին պարունակությունը պակաս է ստացվել շահագործման ընթացքում 15,7%-ով, իսկ Mo-ի պարունակությունը՝ 19,6%-ով: Ընդհանուր առմամբ, Քաջարանի ոչ արդյունաբերական համարվող պաշարների 20,6% վերագնահատվել է որպես (բալանսային) արդյունաբերական պաշար:

Շահունյանի հանքավայրում հանքային երակների մեծ մասը հետախուզվում է, իսկ մի քանի երակներ՝ շահագործվում:

Շահագործվող երակների արդյունահանման տվյալների համադրումը հետախուզական տվյալների հետ, հնարավորություն կտա պարզելու սխալի չափը և մշակելու հետախուզման տվյալների գնահատման արդյունավետ մեթոդներ:

НОВАЯ ТЕХНОЛОГИЯ КОМПЛЕКСНОЙ ПЕРЕРАБОТКИ МОЛИБДЕНОВОГО КОНЦЕНТРАТА, ОБЕСПЕЧИВАЮЩАЯ ЭКОЛОГИЧЕСКУЮ БЕЗОПАСНОСТЬ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

К. Акопян, А. Акопян

Существующие технологии переработки молибденового концентрата путем окислительного обжига характеризуются значительными выбросами серы в окружающую среду.

Содержание серы в исходном сырье составляет порядка 35%, которое теряется безвозвратно и является причиной загрязнения окружающей среды. Низкая концентрация SO₂ в обжиговых газах не позволяет утилизировать серу традиционными способами.

Новая технология парокислорода молибденового концентрата связана прежде всего с утилизацией серы с целью сохранности окружающей среды. По новой технологии молибденовый концентрат обрабатывается паром по специальному технологическому режиму.

Нетрадиционный способ переработки молибденового концентрата парокислорода позволяет извлекать серу в виде побочного продукта сульфида нат-

рия, пригодного для непосредственного использования в качестве флюорегента при обогащении руд или в элементарном виде.

Предлагаемая технология пареокидирования позволяет успешно решить проблему комплексной высокоэкономичной, экологически чистой переработки молибденового концентрата с точки зрения достижения высоких показателей процесса (степень извлечения молибдена 98,5%, рения 96% и серы-98,4%), обеспечивая современные требования охраны окружающей среды.

На Запелурском медно-молибденовом комбинате построена опытно-промышленная установка производительностью 700т. технической окиси молибдена в год.

Новая технология защищена одним авторским свидетельством на изобретение; выдана одна заявка евразийского патента на изобретение.

ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԿՐԱՔԱՐԱՅԻՆ ՄԱՐՄԱՐԻ ԿՏՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՌԵԺԻՄԻ ԸՆՏՐՈՒՄԸ

Ս.Սկրտչյան

Հայաստանի Հանրապետության տարածքում բնական քարերի և 100-ից ավելի հրաբխային տուֆի հանքավայրերի շարքը 1980թ.-ից հետո համարվեց կրաքարային մարմարի հարուստ հանքավայրերով Սյունիքի մարզկենտրոն Կապանի շրջանում:

Հանքավայրերի տեղանքի ռելիեֆը, օգտակար շերտի, մակաբազման ապարների հզորությունը, հանվող բլոկների բնական ճեղքվածքների առկայությունը, որոշիչ դեր են խաղում այդ հանքավայրերի մշակման համակարգի և բլոկների հանման եղանակի կիրառության մեջ:

Դավիթ-Բեկի, Գեղանուշի և Դարմաձորի կրաքարային մարմարի հանքավայրերում բլոկների ելքը լեռնային զանգվածից կազմում է 25%:

Մարմարի բլոկներից երեսապատման սալիկների կտրման արդյունավետ ռեժիմի ընտրման նախապայման համոզմանում է բնական ճեղքերի և կտրման ուղղությունների համընկնեցումը: Կախված ամրությունից, հատիկային կազմից, բնական վիճակի պահպանման անհրաժեշտությունից և աբրազիվությունից, փորձնական ճանապարհով պետք է ընտրվի կտրող գործիքի տեսակը: Հանվող բլոկների մշակելիության գործակիցը որոշվում է ըստ կտրման, փայլեցման, եզրակտրման հատկությունների և կտրող հաստոցի կառուցվածքային առանձնահատկության: Կտրման լավագույն և արդյունավետ ռեժիմի ընտրման համար պետք է որոշվի կտրիչի ընկրկման առավելագույն արագությունը (սմ/րոպե, սմ/ժամ) և սառեցնող հեղուկի ծախսը: Հնարավոր դարձնելով բլոկի միավոր ծավալից երեսապատման սալիկների առավելագույն ելք, այնաստյա գործիքների, նյութերի և սառեցնող հեղուկի նվազագույն ծախսերով, կհասնենք արտադրանքի ինքնարժեքի իջեցման և արտադրողականության բարձրացման:

Տեղական հունքի հարուստ բազան հնարավորություն է տալիս ապագայում Սյունիքի մարզում զարգացնել մարմարյա և բազալտե սալիկների, պորֆիրիտային խճի, կրի, լվացված ավազի և այլ շինանյութերի արտադրություն, որն էապես կնպաստի աշխատատեղերի ստեղծման և մարզի տնտեսական զարգացման գործընթացին:

ԿԱՊԱՆԻ ԼԵՈՆԱՀԱՐՍԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՀԱՐՍԱՅՈՒՑԻՉ ՖԱԲՐԻԿԱՅԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա.Ստեփանյան

Լեռնահանքային արդյունաբերության ծավալների զարգացման արդի պայմաններում գիտահետազոտական ինստիտուտների և ձեռնարկությունների իմեներատիվ կազմակերպության առջև խնդիր է դրվում գտնել բնական ռեսուրսների ռացիոնալ ու համալիր օգտագործման, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման նոր տեխնոլոգիաների մշակման ուղիներ:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է իրականացնել Կապանի լեռնահանքատացման կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայի նախկին քաւոնավայրի օբսիդացված արգասիքի վերամշակումը և այլընտրանքային «թաց» եղանակով օքրայի (ներկանյութ) և այլ արգասիքների ստացումը:

Նախնական հետազոտությունները ցույց են տվել, որ կարելի է վերամշակել պղնձաբարուն կուտակված նախնական նյութի 85-90% և «թաց» եղանակով ստանալ օքրա, ապահովելով 25-30% էլք: Մնացած նստվածքի մաքրումը, լվացման միջոցով, հնարավորություն է տալիս ստանալ SiO₂-ի բարձր պարունակությամբ բլարցային ավազ (տարբեր խոշորահատիկավորմամբ), որը կարող է հունք դառնալ սովորական հունք ապակու և կենցաղային նյութերի արտադրության համար: Միաժամանակ, ապահովվում է շրջակա միջավայրի մաքրությունը, պղնձաբարի զբաղեցրած տարածքի հողօգտագործումն, առանց ռեկուլտիվացման, ինչպես նաև պղնձաբարի ողողաքայքայմանը հողառատ անձրևներից (սելավներից): Ստացված օքրան իր քիմիական բաղադրությամբ և ֆիզիկաքիմիական հատկություններով համապատասխանում է Պետստանդարտի պահանջներին, մասնավորապես, նրա մեջ Fe₂O₃-ի պարունակությունը կազմում է 18,7%, Al₂O₃ 11,6%, MnO 0,11% և այլն:

Ստացվող օքրայի հետագա ջերմային մշակումով կարելի է ստանալ դեղինից (մայր գույն) մինչև բաց շագանակագույն և կարմիր գույնի բարձրորակ ներկեր, որոնք կարող են օգտագործվել ժողտնտեսության տարբեր բնագավառներում:

Տեղական միջոցների և ռեսուրսների օգտագործման հիման վրա կարելի է ապահովել տեխնոլոգիական անհրաժեշտ մակարդակ, տնտեսական բավարար արդյունավետություն և էժան արտադրության կազմակերպում:

Արտադրության կազմակերպման դեպքում, կախված թողարկման ծավալներից, կարելի է ապահովել մարզի և մասնակիորեն, նաև հանրապետության պահանջները ներկերի տեսակետից և ստեղծել նոր աշխատատեղեր:

ԿԱՊԱՆԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱԳԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐԵՒՎԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ն.Գրիգորյան, Գ.Ստեփանյան, Ա.Սահակյան

Ուսումնասիրվել է Կապանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում կիրառվող հանքաքարի պահեստավորմամբ մշակման համակարգի տեխնոլոգիական գործընթացների և 1տ հանքաքարի ինքնարժեքի մաս կազմող նախապատրաստական կտրման ծավալների նվազեցման հարցը:

Հանքաքարի պրկման տեխնոլոգիական գործընթացի ցուցանիշների բարելավման նպատակով պահեստավորմամբ մշակման համակարգով 1,5մ հանութային հզորությամբ բլոկում իրականացվել են փորձեր: Փորձի արդյունքները ցույց են տալիս, որ հորատապայթեցման լավագույն ցուցանիշներ գրանցվում են 1,6մ պայթանցքի խորության, պայթանցքների երկշարք շախմատային տեսքով դասավորության և շարքում պայթանցքների միջև եղած 0,6մ հեռավորության դեպքերում:

1տ հանքաքարի ինքնարժեքի մաս կազմող նախապատրաստական-կտրման ծավալների նվազեցման մասնավորապես բլոկի օպտիմալ պարամետրերի որոշման նպատակով, գրականությունում գոյություն ունեցող նմանատիպ հաշվարկների և հանքավայրը շահագործող Կապանի Լեռնա-Հարստացման կոմբինատում գոյություն ունեցող տեխնիկա-տնտեսական ցուցանիշների հիման վրա իրականացվել են տեսական հաշվարկներ: Բլոկի պարամետրերի օպտիմալացումը կատարվել է երեք ցուցանիշներով՝

1. բլոկի երկարության ցուցանիշով (փոփոխելով այն 40-70մ-ի սահմաններում),
2. յուրաքանչյուր փոփոխման հետևանքով բնամասերում ստացված հանքաքարի կորստի ցուցանիշով,
3. փոփոխված երկարությամբ բլոկի վրա կատարվելիք օդափոխման ծախսերի ցուցանիշով:

Հաշվարկների արդյունքում նկատվում է, որ որքան աճում է բլոկի երկարությունը, այնքան նվազում են կորուստները բնամասերում, սակայն 60-65մ երկարությունից հետո աճում է օդափոխման վրա կատարվելիք ծախսերը:

Այսպիսով հանքավայրում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ նշված ցուցանիշների կիրառման դեպքում հնարավոր է դառնում մշակման համակարգերի տեխնիկա-տնտեսական ցուցանիշների բարելավումը:

ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶՈՎՄԱՆ և ԸՆՏՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Լ. Գրիգորյան, Ա. Սահակյան, Յ. Ստեփանյան

Հանքավայրերի ստորգետնյա մշակման եղանակի դեպքում առանձնահատուկ նշանակություն ունի հանքավայրի բացման օպտիմալ եղանակի ընտրությունը: Հանքավայրի բացման օպտիմալ սխեման ապահովում է լեռնակապիտալ աշխատանքների նվազագույն ծավալներ ու արժեքներ, համքի շահագործման հանձնման նվազագույն ժամկետներ, լեռնային աշխատանքների իրացման առավել կատարելագործված եղանակների կիրառման հնարավորություն և այլն:

Բացման օպտիմալ եղանակի ընտրմանը, ինչպես հայտնի է, նախորդում է հանքավայրի բացման տեխնիկայես կիրառելի տարբերակների ջոկումը, որոշվում են լեռնակապիտալ աշխատանքների ծավալները, խոշորացված ցուցանիշներով հաշվարկվում են հանքավայրի մշակման ամբողջ ժամանակաշրջանի համար կապիտալ և շահագործողական ծախսերը և ջոկված տարբերակների տեխնիկա-տնտեսական համեմատումը: Խոշորացված ցուցանիշներով տարբերակների տեխնիկա-տնտեսական համեմատման դեպքում բացող փորվածքների տեղադրման տեղը, հարկի բարձրությունը կամ պանելի լայնությունը, հանքաքարի աղբատացումն ու կորուստները ընդունվում են կողմնորոշիչ հանքավայրի լեռնաերկրաբանական բնութագրի հիման վրա: Կողմնորոշիչ համարվում են նաև ընդունվող արժեքային ցուցանիշները, ընդ որում նույնատիպ կապիտալ և շահագործողական ծախսերը տարբերակների համեմատման ժամանակ հաշվի չեն առնվում:

Եթե բացման համեմատական տարբերակների համար հաշվի առնվող գումարային ծախսերը նշանակենք Q^1, Q^2 , հետախուզական, կապիտալ և նախապատրաստական փորվածքների անցկացման արդյունքից ուղեկցող հանքաքարի հանութից ետ վերադարձվող միջոցները $Q'_{վերադ}$ և $Q''_{վերադ}$, հանքաքարի այն քանակը, որը հանութահանվում է հանքավայրից, յուրաքանչյուր տարբերակի դեպքում T^1, T^2 , ապա յուրաքանչյուր տարբերակի համար գումարային ծախսերի տեսակարար արժեքը կկազմի

$$a_1 = \frac{Q^1 - Q'_{վերադ}}{T^1}, a_2 = \frac{Q^2 - Q''_{վերադ}}{T^2} \quad (1)$$

Եթե համեմատվող տարբերակներից մեկի համար հաշվի առնվող ծախսերը կազմում են a , մյուս տարբերակի համար $(a + \Delta a)$, և ըստ տարբերակների միանման ծախսերը A , ապա այդ դեպքում հաշվի առնվող ծախսերի հարաբերական տարբերությունը համեմատվող տարբերակների համար կկազմի՝

$$\frac{a + \Delta a - a}{a} = \frac{\Delta a}{a}$$

իսկ լրիվ ծախսերի հարաբերական տարբերությունը կլինի՝

$$\frac{(A + a + \Delta a) - (A + a)}{A + a} = \frac{\Delta a}{A + a} \quad (2)$$

Ակնհայտ է, որ $\frac{\Delta a}{a} > \frac{\Delta a}{A + a}$:

Փաստորեն, հաշվի առնելով լրիվ ծախսերը, տարբերակների արժեքների տարբերությունը լինելու է ավելի փչ, քան հաշվարկվածը: Տարբերակները կարելի է հաշվել տնտեսապես անհամարժեք միայն այն դեպքում, եթե 1տ հանութահանվող հանքաքարի վրա, ըստ տարբերակների, տարբերվում են այդ ծախսերի հաշվարկի հնարավոր մեծ սխալի մեծությամբ:

1տ հանութահանվող հանքաքարի վրա, ծախսերի որոշման հարաբերական սխալը կարելի է որոշել հետևյալ բանաձևով

$$\delta_a = \delta Q + \delta T_D \quad (3)$$

որտեղ Q -ըստ բացման տարբերակի, հաշվի առնվող գումարային ծախսերն են,

T_D -համապատասխանող տարբերակում հանքահանվող հանքաքարի քանակն է,

δQ -ըստ բացման տարբերակի, գումարային ծախսերի որոշման հարաբերական սխալն է,

δT_D - հանութահանվող հանքաքարի քանակի որոշման հարաբերական սխալն է:

Իմանալով δ , հարաբերական սխալի մեծությունը, հեշտությամբ կարելի է հաշվարկել նաև բացարձակ սխալի մեծությունը հետևյալ բանաձևով

$$\Delta a = \delta_a \cdot a \quad (4)$$

որը թույլ կտա յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կատարել ավելի ճշգրիտ տնտեսական հաշվարկ և յուրաքանչյուր տարբերակի համար տալ տնտեսական ավելի ճիշտ գնահատական: